

ԳԵՎՈՐԳ Ծ. ՎՐԴ. ՌՈՒՍՃՈՒՔԼՅԱՆ

Արժանավոր եկեղեցական մը և հասարակական գործիչ մը՝ որով կրնա պարծիլ Փլովտիվի հայ գաղութը, անոր ծնունդ տրված ըլլալուն համար: Ռուսճուքլյան մեր այն հազվագյուտ եկեղեցականներե է, որ հասարակ քահանայութենե բարձրացած է մինչև առաջնորդական պաշտոնի ու միջոց մը ձեռնհասորեն վարած է նաև Կ. Պոլսո պատրիարքարանի փոխանորդությունը և տեղապահությունը:

Ծնած է Փլովտիվ (Պուլկարիա) 1829-ին: Աշխարհական անունը եղած է Թադեոս, ամուսնացած է 1856-ին ու քահանա ձեռնադրված՝ 1864-ին: Իր երիցուհին վախճանելով այրիացած ու վարդապետ եղած 1875-ին, ազդեցիկ դեմք մը ու եռանդուն գործիչ մը հանդիսացած է: Օսմանյան տիրապետության շրջանին, իբրև Մեջլիսի իտարեի անդամ արժանավոր կերպով ներկայացուցած է իր համայնքն՝ պաշտպանելով անոր շահերը, ինչպես նաև ճնշված պուլկար ժողովուրդի ու եկեղեցվո իրավունքները:

Մասնավորապես մեծ է եղած իր դերը Պուլկարիո ապրիլյան ապստամբության շրջանին 1876 թվին: Իր բազմաթիվ բարերարություններեն կինշվին մասնավորաբար պուլկար եկեղեցականներ, ուսուցիչներ և ուրիշ հայտնի դեմքեր բանտեն և կախաղանեն ազատելը: Քաղաքիս միտրոպոլիտի կյանքը փրկած է (Բուիսի միտրոպոլիտ Պլովտիվի) 1876, հեղափոխության շրջանին պահելով զայն իր մոտը մինչև Պուլկարիո ազատության պաշտոնական հոչակումը:

Կարևոր եղած է իր գործունեությունը 1877—78 ռուս և թուրք պատերազմի շրջանին: Մեկ կողմե պաշտպանած է կյանքը բազմաթիվ պուլկարներու, մյուս կողմե աշխատած է ի նպաստ հայկական դատին, պահելով նաև իր հմայքը օսմանյան կառավարական շրջանակներու մոտ:

1878-ին ռուս և թուրթ պատերազմի վախճանին, Ադրիանապոլսո առաջնորդ էր երբ ռուսական բանակը մուտք կգործե հաղթական նույն քաղաքը: Ռուսճուքլյան այս առիթով կներկայանա բանակի վերին հրամանատար Նիկոլա մեծ իշխանին ու առաջին անգամ ըլլալով կխոսի հայկական հարցի մասին, որ նույն օրերուն Ադրիանապոլսո մեջ գծված հաշտության նախաշավիղ պայմաններուն մաս կազմեց ու քիչ վերջը մարտ 3-ին, Սան-Ստեֆանոյի մեջ կնքված ծանոթ դաշնագրին 16-րդ հոդվածը եղավ:

Այդ հոդվածով Օսմանյան Կայսրության հայաբնակ նահանգներու (Թրքահայաստանի) բարեկարգությունը կերաշխավորեր ռուս բանակի ներկայությամբ:

Ռուսճուքլյան այս մասին նախապես ստացած էր Ներսես պատրիարքի հավանությունը: Այսպես Ռուսճուքլյան նախապես գետինը հարդարած էր և պետք է ըսել, թե ինք եղած էր նաև գաղափարը հղացողը, այնպես որ Ներսես պատրիարք Վարժապետյանի այցելությունը մեծ իշխան Նիկոլային պաշտոնական վավերացումը եղավ Ռուսճուքլյանի բանակցություններուն և իր տեսակետի հաղթանակին:

Կ. Պոլսո պատրիարքարանը գնահատելով անոր այս և նման ծառայությունները՝

1880-ին Պոլիս կիրավիրե զայն՝ վարելու պատրիարքարանի փոխանորդի պաշտոնը: Քիչ հետո պատրիարքը և վարչությունը հրաժարած ըլլալով, գործերու ամբողջ ծանրությունը կմնա Ռուսճուքլյանի վրա, որը ձեռնհասորեն կվարեր գործերը դիվանի հետ խորհրդակցությամբ: 13 ամիսներ կշարունակվի այս վիճակը, ոչ մեկ դժգոհություն իր մասին, ինչ որ լավագույն գնահատանքն է. իսկ պատրիարքի մահեն հետո, զինքը կընտրեն որոշ ժամանակի մը համար պատրիարքական տեղապահ:

Գրեթե վեց տարի անընդհատ կպաշտոնավարե պատրիարքարանի մեջ, իբր փոխանորդ կամ տեղապահ, մինչև Խորեն Աշքյան պատրիարքի ընտրությունը: Աշքյան և վարչությունը գնահատելով իր ծառայությունը կորոշեն եպիսկոպոսացնել զայն. հանձնելով անոր Պուլկարիո և Արևվելյան Ռումելիի նորահաստատ առաջնորդությունը, որ հիմնավորում պիտի ըլլար այսօրվա պուլկարահայ թեմին:

Սակայն Ռուսճուքլյանի երկար և տքնաջան աշխատությունը քայքայեր էր իր ֆիզիկականը, անձնապես ալ դառնացեր էր պատրիարքարանի մեջ կարգ մը իրադարձություններեն, որով կմերժե պատրիարքարանի հանձնարարած պաշտոնն ու աստիճանի բարձրացումը ու կքաշվի իր ծննդավայր Փլովտիվ ապրելով իր քահանա եղբորը բնակարանը, ուր կմնա մինչև իր մահը, որը տեղի կունենա 1893-ին սեպտեմբեր 10-ին:

Մեծաշուք կըլլա իր հուղարկավորությունը, բազմաթիվ պուլկար երևելիներ ու եկեղեցականներ կհետևին իր դագաղին և հուզյալ դամբանականներով կարտահայտեն իրենց խորունկ վիշտն ու երախտագիտությունը՝ հանդեպ մեծ հայուն և պուլկար ժողովուրդի մեծ բարեկամին:

Իր մարմինը կամփոփվի Փլովտիվի հայկական եկեղեցվո շրջափակին մեջ իր եղբոր՝ տեր Արիստակես քահանայի շիրիմին կից:

Փափաքելի է Փլովտիվի ս. Գևորգ եկեղեցվո վարչությունը գնահատելով այս մեծ եկեղեցականի գործը, պատշաճ ձևով մը հիշատակում մը ըներ անոր դամբարանին վրա, որ գալիք սերունդները գիտնան և ճանչնան հայ և պուլկար եղբայրակցության այս մեծ ռահվիրան ու երախտավորը:

Հարգանք իր անթառամ հիշատակին:

ՎԱՀԵ ՉԵՐՉԻՅԱՆ

Փլովտիվ